ԲՅՈՒԼԵՏԵՆ

Փետրվար 2024թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Փետրվարին գումարվել է Պալատի խորհրդի 5 նիստ՝ 07.02.2024թ.-ին, 12.02.24թ.-ին, 23.02.2024թ.-ին, 26.02.2024թ.-ին, 29.02.2024թ.-ին:

07.02.2024թ. նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատին անդամակցությունը դադարեցնելու, Պալատի Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովին անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները, ինչպես նաև Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի (նոր խմբագրությամբ՝ այդ թվում քննական առարկաների կազմը) և որակավորման քննությունների անցկացման կարգի (նոր խմբագրության) մասին որոշումը:

12.02.24թ. նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցությունը դադարեցնելու, Պալատի խորհրդի 6.07.23թ N19-L որոշումը փոփոխելու մասին որոշումները և Պալատի անդամակցության հանձնաժողովի 2023թ. տարեկան գործունեության հաշվետվությունը:

23.02.2024թ. նիստի ընթացքում հաստատվեցին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում տալու, Պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահին պաշտոնից ազատելու և նոր նախագահ նշանակելու, Հանձնաժողովին անդամակցությունը դադարեցնելու և անհատական կազմում փոփոխություն կատարելու, Հանձնաժողովի կանոնադրության փոփոխություն կատարելու մասին որոշումները, ինչպես նաև քննարկվեցին Պալատի գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

26.02.2024թ. նիստի ընթացքում հաստատվեց Պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անհատական կազմը համալրելու մասին որոշումը:

29.02.2024թ. նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի աուդիտորի որակավորումը մերժելու, Պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անհատական կազմը համալրելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ 06.02.2024թ.-ին, 20.02.2024թ.-ին և 23.02.2024թ.-ին:

Անդամակցության հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 16.02.2024թ.-ին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

12.02.2024թ.-ին տեղի է ունեցել «Աշխատանքային օրենսդրության կարգավորումներն ու վերջին փոփոխությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ժորա Սարգսյանը:

22.02.2024թ -ին տեղի է ունեցել «Տնտեսական (ներառյալ հարակից) օրենսդրության ուշարժան նորություն-ները՝ մասնագիտական ներկայացմամբ» թեմայով դասընթացը: Այն վարում էին Ահարոն Չիլինգարյանը և Նարինե Նուրոյանը:

27.02.2024թ.-ին տեղի է ունեցել «Ոչ ռեզիդենտների շահութահարկով հարկման առանձնահատկությունները՝ Օրենսգքրի և կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակներում, հիմնական դրույթների ներկայացում և քննարկում (այդ թվում՝ հարց ու պատասխանի ձևաչափով)» թեմայով դասընթացը: Այն վարում էր Հովհաննես Յանիկյանը:

29.02.2024թ.-ին տեղի է ունեցել «Ավելաց-ված արժեքի հարկին վերաբերվող օրենսդ-րության փոփոխությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ասանեթ Ալոյանը